



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

12 փետրվարի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Թունյանի

Անդամակցությամբ՝ Ա. Գյուլումյանի

Ա. Պետրոսյանի

Քննության առնելով Արամ Հակոբյանի անհատական դիմումի ընդունելիության
հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

Արամ Հակոբյանը 2018թ. հունվարի 24-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝
խնդրելով. «ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 4-րդ, 61-րդ, 63-րդ, 75-րդ, 78-րդ, 79-րդ
և 80-րդ հոդվածներին հակասող ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի
290-րդ հոդվածի 1-ին մասը կամ դատական իրավակիրառ պրակտիկայում դրան տրված
այնպիսի մեկնաբանությունը, համաձայն որի՝ քրեական հետապնդումը դադարեցնելու
պահանջի կապակցությամբ կայացված որոշումը չի հանդիսանում մինչդատական
վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա»:

1. Դիմողը՝ բերելով իր փաստաթղթերը, նշում է, որ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքից անձը պետք է հնարավորություն ունենա օգտվել նաև նախնական քննության ընթացքում՝ արդարության պահանջների պահպանմամբ և ողջամիտ ժամկետում քննության իր իրավունքի խախտման դեպքում:

Դիմողը մատնանշում է, որ ընդհանուր իրավասության դատարանների կողմից ձևավորված իրավական դիրքորոշման համաձայն՝ վիճարկվող դրույթն արգելափակում է քրեական հետապնդումը դադարեցնելու միջնորդության կապակցությամբ կայացված որոշման՝ դատական ստուգման հնարավորությունը:

Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթն այնքանով, որքանով չի երաշխավորում կամ իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունն այնքանով, որքանով չի ապահովում ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի կապակցությամբ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը, հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 4-րդ, 61-րդ, 63-րդ, 75-րդ, 78-րդ, 79-րդ և 80-րդ հոդվածներին:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթն ընդհանուր առմամբ սահմանում է հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումները և գործողությունները դատարան բողոքարկելու իրավունքը, սակայն չի հստակեցնում դատական պաշտպանության սահմանները և ծավալը, ինչի արդյունքում իրավակիրառ պրակտիկայում ստեղծվում է իրավական անորոշություն՝ հնարավորություն տալով այն մեկնաբանել իրար հակասող եղանակներով:

2. ՀՀ սահմանադրական դատարանը 2009 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-844 որոշմամբ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր է ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի «... և էթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը, դատական պրակտիկայում դրան տրված՝ նաև «անգործությանը» վերագրվող բովանդակության մասով,

որով գործնականում նույն հոդվածի 2-րդ մասի վրա տարածելով 1-ին մասում նախատեսված պայմանն ու նման մեկնաբանությամբ դիմողների նկատմամբ կիրառելով հոդվածի 1-ին մասը՝ սահմանափակվել են մարդու՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները»:

Վերոնշյալ որոշման մեջ Սահմանադրական դատարանը կարևորել է նաև խնդրառարկա գործով վիճարկվող նորմով կարգավորվող քրեադատավարական հարաբերությունների օբյեկտը՝ արձանագրելով, մասնավորապես, որ «... քրեական գործերով մինչդատական վարույթում որպես դատական բողոքարկման անմիջական օբյեկտ /առարկա/ են հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշումները և գործողությունները, այսինքն՝ այնպիսի որոշումներ ու գործողություններ, որպիսիք հատկապես մատնանշված են օրենսգրքի համապատասխան նորմերում: Միաժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությանը նվիրված 39-րդ գլխի 278 հոդվածը /որը վերաբերում է դատական վերահսկողության ոլորտին/ սահմանում է /մաս 2/, որ «Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները»:

Նշվածին զուգահեռ, օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է նաև հետաքննության, նախաքննության մարմինների, դատախազի դատական բողոքարկման ենթակա լրացուցիչ այլ գործողություններ ու որոշումներ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ բաժնի «Քրեական գործով մինչդատական վարույթ» հոդվածների, 290-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի համեմատական վերլուծությունը վկայում է, որ օրենսգրքի վիճարկվող 290-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով մինչդատական վարույթում դատական բողոքարկման ենթակա են իրավասու մարմինների ու պաշտոնատար անձանց այն որոշումները և գործողությունները, որպիսիք կայացվել են այդ սուբյեկտների՝ օրենսգրքի 53, 55 և 56-րդ հոդվածներում նախատեսված իրենց ընդհանուր լիազորությունների

շրջանակներում: Իսկ օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասը, որպես առանձնահատուկ իրավակարգավորում, սահմանում է, որ. «Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 20-րդ կետի համաձայն՝ քննիչը լիազորված է լուծել քրեական դատավարությանը մասնակցող անձանց միջնորդությունները, ինչպես նաև այլ անձանց հայտարարությունները և դիմումները: ՀՀ քրեական դատավարության՝ «Միջնորդությունների և պահանջների՝ քննության առնելու պարտադիր լինելը» վերտառությամբ 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ միջնորդությունները և պահանջները պետք է քննության առնվեն և լուծվեն դրանք հայտարարելուց անմիջապես հետո, եթե սույն օրենսգրքի դրույթներով այլ կարգ սահմանված չէ: Միջնորդության լուծումը կարող է հետաձգվել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից մինչև միջնորդության վերաբերյալ որոշում ընդունելու համար էական հանգամանքների պարզումը: Խնդրո առարկա գործի շրջանակներում դիմողը դատական կարգով բողոքարկել է ոչ թե միջնորդության լուծման արդյունքում կայացված որոշումը, այլ միջնորդության լուծումը հետաձգելու մասին որոշումը, որը, համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի վերոշարադրյալ իրավական դիրքորոշումների, չի մտնում մինչդատական վարույթում դատական բողոքարկման ենթակա որոշումների շրջանակի մեջ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Արամ Հակոբյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

12 փետրվարի 2018 թվականի
ՍԴԴԿՈ/1-3